ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5450-Ա «09» նոյեմբերի 2026 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԷԴ. ԲՈՅԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.121 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԱՀԱԳ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով «Երևանի Էդ. Բոյաջյանի անվան հ.121 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղի հարցազրույցի 2026 թվականի սեպտեմբերի 28-ի արձանագրությունը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2026 թվականի հոկտեմբերի 30-ի հ. Ն/73156-26 գրությունը՝

1. Վահագ Մարտիրոսի Մկրտչյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 9-ից նշանակել «Երևանի Էդ. Բոյաջյանի անվան հ.121 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2026 թվականի նոյեմբերի 9-ից մինչև 2031 թվականի նոյեմբերի 9-ը ներառյալ:

2. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ